

AMERICAN COMMITTEE TO AID ARMENIA
 31-33 East 27th St., New York, N. Y.




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ԳԼԽԱԻՈՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

(Խ. ՀԱՅԱՍՏԱՆ)

ՆԱՄԱԿԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ



361
 Z-24

Հայաստանի կառավարության ներքին գործերի կառավարության 204-ի կեդր. վարչության



8619-56

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻԷՐԸ ՀՕԿ-Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ

ՀՕԿ-ի Ամերիկայի Կեդրոնական Վարչութիւնը ստացաւ, ընկեր Գ. Գանձանակեանի ձեռքով, Ս. Հայաստանի Կառավարութեան կողմէ նւիրւած, գունաւոր մարմարէ փորագրւած թանաքի այս կազմածը — երկու կաղամար, մէկ գրչակալ, ծծունակալ մը եւ մոխրաման մը. բոլորը միասին հաստատուած գեղարւեստականօրէն քանդակուած մարմարեա պատուանդանի մը վրայ, որը եղբրւած է ճերմակ եւ գունաւոր մարմարէ բանուած սիւներով: Իր մինչեւ ամենափոքր մանրամասնութիւնը ձեռագործ այս թանաքի կազմածը ոչ միայն կը յայտնաբերէ քանդակագործի տաղանդը, այլ եւ Հայաստանեան մարմարի գեղեցկութիւնն ու բանեւելութիւնը:

Ընկեր Գ. Գանձանակեան նւէրը յանձնեց ՀՕԿ-ի Կեդրոնին, Ընկ. Ս. Տէր Գաբրիէլեանի ողջոյնի հետեւեալ խօսքերով:—

«Իբր նախագահ, Ս. Հայաստանի Ժողովրդական Կոմիսարներու Սորճուրդին, կ'ողջունեմ համայն հայ աշխատաւորութիւնը եւ բարեկամ կազմակերպութիւնները, որոնք իրենց կուտ շարքերով համախմբուած են Ս. Հայաստանի շուրջ: Կը մաղթեմ ՀՕԿ-ի Ամերիկայի Կեդրոնական Վարչութեան յաջողութիւն իր գանգաւորները ներգրաւելու եւ Ս. Հայաստանի շինարարութեան լծելու աշխատանքին մէջ»:

ՀՕԿ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ նւէրը ընդունեց Ընկ. Ս. Գասպարեան, եւ Կեդրոնական Վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեց եւ խոստացաւ գաղութահայ գանգաւորները Ս. Հայաստանի շուրջ հնաւաբելու աշխատանքը աւելի ուժեղացնել եւ պատուով գլուխ հանել իրենց վրայ դրւած պարտականութիւնը:

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Հայաստանի Օգնութեան Կոմիտէի, ՀՕԿ-ի, Գլխաւոր Վարչութեան քիւ 5 Երջաբերականը, իր բովանդակութեան կարեւորութեան համար, որպէս առանձին գրք-փոյկ լոյս կ'ընծայենք, այն համոզումով քէ մեծապէս պիտի նպաստէ գաղութահայութիւնը մեր Խորհրդային Հայրենիքին կապելու գործին:

ՀՕԿ-Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋՈՒԹԻՒՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ – ՆԱՄԱԿ ՀՕԿ-Ի ԲՈԼՈՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

1.— ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ 1933 ԹԻՒՆ

Միքելի Ընկերներ,

1933 թիւը Սոցիալիստական Մեծ Հայրենիքի համար հանդիսացաւ աննախընթաց եւ հոյակապ տարի:

Երկրորդ Հնդամեակի առաջին տաքում, մեր պրոլետարական եւ աշխատաւորական մասսաները՝ ինչպէս արդիւնաբերութեան եւ գիւղատնտեսութեան, նոյնպէս կուլտուրական ասպարիզում հրապարակ հանեցին նաճումները եւ վերելքի այնպիսի փայլուն փաստեր, որոնք զարմացրին նոյն իսկ մեր իշխանութեան ամենաօխերիմ թշնամիներին:

Սորճուրդային Միութիւնը կանգնած է այսօր ամենաառաջաւոր արդիւնաբերական երկրների առաջին շարքում: Անցնող տարին նշանաւոր է մանաւանդ այն պատճառով, որ նա տեսաւ մեր յեղափոխութեան ամենադժարին հանգոյցներից մէկը՝ գիւղի սոցիալիստական վերակառուցման հարցի լուծումը:

Այսպէս հնարաւոր եղաւ ապահովել սոցիալիզմի յաղթանակը թէ՛ արդիւնաբերութեան եւ թէ՛ գիւղատնտեսութեան մարդերում:

Ո՞ւմ համար գաղտնիք է, որ երբ Սորճուրդային Միութեան բանուորներն ու աշխատաւորները, քաղաքն ու գիւղը՝ ձեռք ձեռքի տւած՝ հերոսական ճիգեր էին թափում գերակատարելու առաջին Հնդամեակի ծրագիրը, բուրժուական – կապիտալիստական աշխարհը թերահաւատութեամբ էր վերաբերում դէպի այն, նոյն իսկ հեզնում ու ծաղրում էր:

2.— ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1933 ԹԻՒՆ

Ընդգծելով Սորճուրդային Միութեան հսկա նաճումները, որոնց շնորհիւ նա թեւակոխեց սոցիալիզմի վճռական յաղթանակի ժամանակաշրջանը, մենք չենք կարող չչեչտել նրա անբաժան մասի՝ Սորճուրդային Հայաստանի աշխատաւորական յաղթանակների մասին:

Այսօր, ընկերներ, անհերքելի փաստ է, որ մեր գիւղատնտեսական միջնադարեան հայաստանը վերածւել է արդիւնաբերական երկրի:

1919 թ., դաշնակ ռեժիմի տակ, արդիւնաբերութեան տեսակարար կշիռը, Ժողովրդական տնտեսութեան մէջ, միայն 7,7 էր: Այդ համեմատութիւնը բարձրանում է, 1926-28թ., 21,5-ի, 1932-ին՝ 52,1-ի, իսկ անցնող տարւա ընթացքում՝ 54-ի:

Ընկերներ, ո՞վ կարող է ուրանալ Երգեաները, (Երեւանի ջրակեքտրակայանները), Զորագետ, Քանաքեռագետ եւ այլ ջրակեքտրա-

կայանները, որոնք արդէն իրենց ուրոյն տեղն են գրաւել մեր անտեսական աշխարհագրութեան քարտէսում: Ո՞վ կարող է այնքան կոյր ձեւանալ չտեսնելու համար Էվջիլարի, Էջմիածնի, Շիրակի, Փոքր Սարգարապատի, Ղոբրի հոյակապ ջրանցքները: Ո՞վ կարող է փորձել հերքելու գոյութիւնը մեր թեքաթիւի, բամպակադաշնների, կարբիդների ձէթ - օճառի, փայտամշակման, ծխախոտի, կոնսերվի, քիմիայի, ցիմենտի եւ վերջապէս կաուչուի կոմբինատի պէս հսկաների ինչպէս եւ Ալլաւիլերդու, Ղափանի, Ազարակի եւ այլ պղնձահանքերի եւ նրանց կողքին օր ու գիշեր աշխատող գործարանների: Ո՞վ պիտի յանդգնէր անտես անելու մեր տասնեակ խորհրդային անտեսութիւնները եւ հաղարաւոր կոլտնտեսութիւնները, որոնց քրտնաջան ու հարւածային աշխատանքի շնորհիւ Սորհրդային Հայաստանի անապատները փոխել են այսօր ովասիաների եւ պճնուում են անհամար այգիներով, բանջարանոցներով ու անտառներով, եւ մեր բազմաթիւ թրաքտորները, կոմպանները եւ զիւղատնտեսական այլ գործիքները, որոնք ձեղքում են երէկւմ ժլատ հողի կուրծքը եւ դարձնում նրան առատաձեռն:

Հապա մեր փառապանծ Համալսարանն ու ինստիտուտները, մեր բանֆակները (բանւորական Փակիւլուէ), տեխնիկումները, առաջին եւ երկրորդ աստիճանի դպրոցների ահագին ցանցը, մեր մանկապարտէզները, մանկամտօրները, հրապարակները, մեր նկարչական դպրոցը, մեր կոնսերվատորիան (երաժշտանոցը), մեր զիւղարւեստական փառքերը՝ գրամատիկական թատրոնները, նորածին օպերան, կինօն (սինեմա), եւ այլն:

Շատ են, շատ, ընկերներ, մեր նւաճումները սոցիալիզմի կառուցման ճակատում:

Այս բոլորը կան եւ հանդիսանում են այն կոթողները, որոնց կանգնեցրել է Հայաստանի յաղթական աշխատաւորութիւնը իր հերոսական աշխատանքով եւ պայքարով:

3. — ՀՕԿ-Ը 1933 ԹԻԻՆ ԱՐՏԱՍՍ.ՀՄԱՆՈՒՄ

ՀՕԿ-ը թեւակոխել է իր կեանքի 13-րդ տարին: Ի՞նչ է նա: Ընկերներ, դուք երբէք չպէտք է աչքաթող անէք նրա էական հիմնական նկարագրերը. նա անկուսակցական կազմակերպութիւն է, ամուր կանգնած Սորհրդային Հայաստանի կողքին: Եւ իրրեւ այդ՝ նա բաց է եղել եւ պիտի լինի բոլոր նրանց առաջ, որոնք անկեղծօրէն ու ազնւօրէն ցանկանում են օգնել թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս մեր երկրի վերելքին: Նա իր 10,000 անդամներով՝ զաղութահայ մասսայական կազմակերպութիւնն է, որի խարխիւն են կազմում աշխատաւորական զանգւածները, մանր առեւտրական խաւերը եւ մրտաւորականները:

ՀՕԿ-ը դործ է դրել բոլոր հնարաւոր միջոցները ազատագրելու զաղութահայ զանգւածները հայ աղգայնական մտքի շղթաներից եւ համախմբելու նրանց Սորհրդային Հայրենիքի շուրջը, ծանօթացնելով Սորհրդային Հայաստանի վերելքի բազմաթիւ ու բազմապիսի աշխատանքներին:

ՀՕԿ-ը իր բանախօսութիւններով, ժողովներով, միտինգներով, ինչպէս եւ իր Սորհրդային Կինօ — նկարների ցուցադրումով, նոր կենցաղի պիեսներով եւ երգերով, շարունակ վառ է պահել զաղութահայ մասսաների տրամադրութիւնը դէպի Սորհ. Հայաստանը:

ՀՕԿ-ը, ինչպէս միշտ, նոյնպէս էլ անցնող 1933 թւին, հանդիսացել է ուրեմն կենդանի շաղկապը Սորհրդային Հայաստանի եւ զաղութահայ աշխատաւորական զանգւածներու միջեւ:

Այս տեսակէտով՝ մեծապէս կարեւոր է եղել այն դերը, որ կատարել է ՀՕԿ-ը ներգաղթի գործում: Նա է, որ՝ ընդառաջելով զաղութահայ բազմաթիւ աշխատաւորների ցանկութեան — գնալ, լծել մեր երկրի սոցիալիստական շինարարութեան — ցուցակագրել է նրանց, ապահովել նրանց ներգաղթի արտօնութիւնը, նաև նստեցրել եւ փոխադրել Սորհրդային Հայրենիք, ուր ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութիւնը, մեր կառավարութեան հետ, փութացել է ընծայել նրանց ամեն տեսակի աջակցութիւն:

1933 թւին, ՀՕԿ-ի աշխատանքների եւ իրագործումների շարքում պէտք է առանձնապէս մատնանիշ անել նրա հետեւեալ խոշոր ձեռնարկները. —

- 1) «ՀՕԿ» ամսագրի հրատարակութիւնը, որ լոյս տեսաւ տարւա սկիզբներից եւ որի զաստիարակչական դերը հսկայական է.
- 2) Ներգաղթի Բնակարանային Ֆոնտի կազմութիւնը՝ Հ. Բ. Ը. Միութեան եւ Հայրենակցականների հետ գործակցութեամբ.
- 3) «Արմենիա» հիւրանոցի կառուցման Փոնտի ստեղծումը:

ՀՕԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ընկերներ, համառօտակի նշելով ՀՕԿի աշխատանքի եւ պայքարի կարեւոր ճակատները արտասահմանում, կանցնենք ՀՕԿի աշխատանքներին Սորհրդային Հայաստանում:

Մեզ արդէն ծանօթ են նրա կանգնած յուշարձանները. Էվջիլարի ջրանցքը, աւաղի եւ փայտամշակման գործարանները, ՀՕԿի «Ամերիկահայ» տունը, ինչպէս եւ 1921 թւից նրա ընձեռնած մեծ օգնութիւնը մեր աշխատաւորութեանը թէ՛ զիւղերում եւ թէ՛ քաղաքներում, բաժնելով սերմացուներ, ներմուծելով Սորհրդային Հայաստան բազմաթիւ մարդատար եւ բեռնատար ավտոններ, տրակտորներ եւ հարիւրաւոր գրամեքենաներ ու այլ եւ այլ մեծ ու փոքր գործիքներ:

ՀՅԿի միջոցով են ներմուծւել նաեւ Հայրենակցական Միութիւնները կողմից նոր աւաններին ուղարկւած բոլոր իրերը:

ՀՅԿը խիստ օգտակար աշխատանք է տարել նաեւ մշակութի ճակատում. օրինակ, Լուսժողովի միջոցով նւիրել է 15,000 ուրլի Հայ Թատրոնի Պատմութեան հրատարակութեան Փոնտին, 20,000 ուրլի՝ Պետօպերայի կազմակերպման Փոնտին: Նպաստելու համար հայ օպերայի զարգացման՝ յանձնարարել է յօրինել մեր յայտնի գրողներ՝ Դ. Դէմիրճեանի եւ Վ. Թոթովենցի «Քաջ Նազար»ի եւ «Աստղածոր»ի լիբրետոները, իսկ սիրւած երգահաններ Յարօ Ստեփանեանին եւ Ա. Տէր Աւետիսեանին՝ եղանակաւորել նրանց: Երկու օպերաներն էլ պատրաստ են արդէն, որոնցից «Քաջ Նազար»ը կը ներկայացուի այս տարւա, իսկ «Աստղածոր»ը 1934-35 թւի թատերական սեզոնին: Դարձեալ ՀՅԿի պատուէրով ձայնագրւած են մի քանի սիմֆոնիկ կտորներ մեր ծանօթ երաժշտագէտներ՝ Բուշնարեանի, Աղամեանի, Եղիազարեանի կողմից: Այս բոլոր աշխատանքների վրա ՀՅԿը ծախսել է տասնեակ հազարներ: Մեր կազմակերպութիւնը մեծ ուշադրութիւն է նւիրել եւ մեր զրականութեան քաջալերման: Բացի նրա արդէն լոյս բնծայած գործերից, տպագրւելու վրա են մի շարք երկասիրութիւններ՝ Փարիզում, ի միջի այլոց, պատմաբան Լէօի վերջին աշխատասիրութիւնը, «Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղափարախօսութիւնը»:

ՀՅԿ-Ը ԵՒ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ

Բոլորիդ յայտնի է, ընկերներ, որ Հայրենակցական Միութիւնները, Վերաշինացիները, Կրթասիրացիները, եւ Ուսումնասիրացիները ներկայացրել են եւ ներկայացնում են մեր աշխատանքի ամենակարեւոր եւ ամենարեզմնաւոր գետիները մէկը, որպէս աշխատաւորական կազմակերպութիւններ, որոնք չեն կարող բարեկամարար տրամադրւած չը լինել դէպի մեր պրոլետարական հայրենիքը:

Այդ կազմակերպութիւնները երկար ժամանակ հանդիսացել են թէ քաղաքական եւ թէ նիւթական անխնա շահագործման առարկա մեր աշխատաւորութեան թշնամի եւ մատնաւորաբար նրա երդւեալ դահիճի՝ դաշնակ չէֆերի համար: Կապիտալիստական աշխարհի օրհասական տաղնապը, մի կողմից, Սորհրդային Հայաստանի արագընթաց վերելքը, միւս կողմից, բաց են արել այդ հասարակական կազմակերպութիւնների աչքերը եւ մղել նրանց նոր աւանների կառուցման՝ նպաստելու համար իրենց համաքաղաքացիներին ներդառնալիս Սորհրդային Հայաստան:

Ահա ձեզ նոր Եւզոկիան՝ Էջմիածնի կից, նոր Արարկիւրը, նոր Մալաթիան, նոր Սերաստիան, նոր Թոմարդա — Կեսարիա, նոր

Սարբերդը՝ Երեւանի շուրջը եւ, վերջապէս, նոր Տիգրանակերտը, որի հիմքերը կը դրւին գարնան:

Կան դեռ եւ Կիւրինը, Բալահովտը, Կամարակը, Եղզատը եւ ուրիշ միութիւններ, որոնք հաւանօրէն մինչեւ գարուն կասեն իրենց վերջական խօսքը եւ կանցնին, ինչպէս միւսները հարւածային աշխատանքի:

Իր, 1934 թ. Յունվար 3-ի նիստում, զբաղւելով Հայրենակցական Միութիւնների ներկա տարւա շինարարական խնդիրներով՝ կառավարութիւնը հաստատեց, հետեւեալ որոշումով, իր նախկին կարգադրութիւնը.

«Ա.— ՀՍՍՀ Լաւրապետութեան մէջ Հայրենակցական Միութիւնների կողմից կառուցուող նոր աւանների շինարարութեան ղեկավարութիւնը դիւր շօնով ՀՅԿի Գլխաւոր Վարչութեան վրա:

«Բ.— Գտնել անհրաժեշտ, որ Հայրենակցական Միութիւններն իրենց շինարարական ծրագիրները եւ նախահաշիւները անմիջապէս ներկայացնեն ՀՅԿի Գլխաւոր Վարչութեանը եւ նրա միջոցով կնքեն շինարարութեան վերաբերեալ բոլոր պայմանագրերը:

«Գ.— Յանձնարարել ՀՅԿի Գլխաւոր Վարչութեանը շինարարական հարցերի վերաբերմամբ անմիջական յարաբերութեան մէջ մըտնելով Հայրենակցական Միութիւնների հետ.

«Դ.— Յանձնարարել ՀՅԿի Գլխաւոր Վարչութեանը՝ ներկայացնել ժողովմոյսին Հայրենակցական Միութիւնների համար 1934 թ. ընթացքում կատարելիք շինարարական աշխատանքների պլանը»:

Ընկերներ, հրամայողական անհրաժեշտութիւն է, որ Հայրենակցական Միութիւններ իրենց գործօն աջակցութիւնը բերեն մեր կառավարութեան եւ ՀՅԿին նոր աւանների զարգացման ու բարգաւաճման համար: Այդ աջակցութիւնը կարող է արտայայտուել ամենալայն չափերով միայն այն ժամանակ, երբ դուք կը շարունակէք Հայրենակցական Միութիւնների ղեկավարութեան մէջ սպրդած թշնամի, անհարգատ տարրերը:

Այդ պատճառով էլ ՀՅԿի բոլոր անդամների գործը պէտք է լինի մտնել Հայրենակցական Միութիւնների եւ Վերաշինացիների շարքերը, աւելի աշխուժացնելու համար նրանց գործունէութիւնը եւ օժանդակութիւնը ի նպաստ իրենց նոր աւանների: Իսկ եթէ կան այնպիսի հայրենակցականներ, որոնք դեռ եւս խորխափում են եւ չեն սկսել որեւէ ձեռնարկ Սորհրդային Հայաստանում, պէտք է մղել նրանց անպայման անցնել անմիջապէս գործի:

ՀՅԿ-Ը ԵՒ ԻՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ

Նասկած չկայ, ընկերներ, որ Հայր. Միութիւնների աշխուժացման այս գործում դուք պիտի հանդիպէք, ինչպէս առաջ, նոյն-

պէս եւ այսուհետեւ, Խորհրդային Հայաստանի անհաշտ թշնամի-
ները ընդգրկուած են՝ դաշնակ չէֆերի գլխաւորութեամբ:

Մեր հակառակորդ մամուլը, իր բոլոր երանգներով, աշխա-
տում է՝ մի կողմից՝ Հայրենակցականների վստահութեան անար-
ժան ցոյց տալ 204-ը, միւս կողմից՝ կասեցնել ներգաղթի անդիմադ-
րելի հոսանքը, իր վաղեմի սովորութեան համաձայն՝ ներկայացնելով
Խորհրդային Հայաստանը իրբեւ «գոթիք»:

Օգտւելով, դժբախտաբար, մեր ընկերների եւ Խորհրդային Հայ-
աստանի բարեկամ Սերաստացի աշխատաւորների զգաստութեան եւ
աչալըջութեան թուլացման մի բուպէից, դաշնակներին՝ յաջողեց
Ամերիկայում գնել իրենց թաթը Սերաստիացիների Վերաչինական
Միութեան Կենտրոնական Վարչութեան վրայ:

Կազմելով մեծամասնութիւնը յիշեալ Հայրենակցական Միու-
թեան Կենտր. Վարչութեան մէջ՝ դաշնակները հետամտում են վի-
ժեցնել Նոր - Սերաստիայի բարգաւաճման գործը՝ ճգնելով խզել
այն բարերար կապը, որ միացնում է այս վերջինը 204ի Գլխա-
ւոր Վարչութեան հետ: Նրանք այն յաւակնութիւնն են յայտնում
թէ՛ Նոր Սերաստիայի Ծին-Յանձնախումբը պէտք է ընտրել իրենց
հայեցողութեամբ եւ ենթարկել իրենց հսկողութեան ու հրաման-
ներին եւ այդ մտքով պահանջեցին նոյն իսկ որ Ծին-Յանձնախումբը
պաշտօնական պայմանագիր կնքէ իրենց հետ:

Եւ այս՝ հէնց այն ժամանակ, երբ 204 - ի Գլխ. Վարչութիւ-
նը՝ իր՝ Նոր - Սերաստիային նւիրած նւթական եւ բարոյական
աջակցութիւնների երկար շարքին աւելացնում էր մի նորը, նկատի
ունենալով՝ որ վերջին կարաւանով ներգաղթող բազմաթիւ Սերաս-
տացիների համար անհրաժեշտ էր անմիջապէս կառուցել բնակարան-
ներ, Գլխաւոր Վարչութիւնը փութաց իր երաշխաւորութեամբ ապա-
հովել Ծինյանձնախումբին 30,000 բուբլի մի փոխառութիւն՝ հը-
նարաւորութիւն ընձայելով, այսպէս, նրան կառուցելու 31 սենեա-
կանոց մի նոր տուն, երբ Վերաչինացի դաշնակ վարիչները գլա-
նում էին իրենց օժանդակութիւնը Նոր - Սերաստիային:

Դաշնակ չէֆերի հակախորհրդային, հակաաշխատաւորական
քաղաքականութեան դէմ ծառանում են սակայն ոչ միայն գաղու-
թահայ օրէց օր աւելի ու աւելի արթնացող եւ արմատականացող
լայն զանգւածները, այլ եւ հէնց իրենց շարքայինները՝ մասսայա-
կան ըմբոստացումներով:

Դաշնակցութեան ծոցում կատարւող տարբարւածման եւ քայ-
քայման պրոցէսը առաջ է գնում կատաստրոֆիկ չափերով:

Դաշնակ Բիւրոն՝ խուճապի մատնւած՝ մղում է բառացիորէն
կեանքի ու մահուան պայքար: Անցեալ տարի, միայն մի քանի ամիս-
ների ընթացքում, նա սպաննել տաւ Մարուքեանը, Գրքըճեանը եւ

Ելիսկոպոս Դուրեանը: Բայց ո՛չ մատնութիւնները, ո՛չ դարանա-
կալ ծեծերն ու սպանութիւնները կարող են կասեցնել Դաշնակցու-
թեան քայքայման անխուսափելի պրոցէսը: Դաշնակ չէֆերը՝ սաստ-
կացնելով իրենց Փաշխտական բարբարոս տերրորը, կարծում են
իրենց ուժի ապացոյցը տալ: Եւ սակայն արիւնուշտ տերրորի
այդ ակտերը ոչ թէ նրանց ուժի, այլ հէնց նրանց տկարութեան,
բարոյալքման, խուճապի շօշափելի նշաններն են:

Պարզ է որ նրանց հարւածների գլխաւոր նշանակէտը պիտի
սխտեմատիկորէն շարունակի կաղմել 204 - ը, այն կազմակերպու-
թիւնը, որ անխնայ մերկացնում է հակախորհրդային դէմքը դա-
ղութահայ լայն զանգւածների առաջ:

Անհրաժեշտ է, հետեւաբար, որ մեր կազմակերպութիւնը լի-
նի միշտ աչալըջ, միշտ զգաստ, զո՛հ չբառնալու համար դաշ-
նակ պրովակացիաներին, դուրերին, ինչպէս այդ տեղի ունեցաւ Գրք-
նորում:

204 - ի դեկալար մարմինները, — արտասահմանում, — պէտք
է ամուր ձեռքով պահպանեն կարգապահութիւնը մեր կազմակեր-
պութեան մէջ, անողք լինեն այն հօկիստների վերաբերմամբ,
որոնք կը խախտեն 204 - եան դիսցիպլինան:

Ծաւալելով գաղափարական գործունէութիւնը սեփական շար-
քերում՝ բարձրացնելու համար նրանց կոիւածութիւնը, պէտք է
աւելի եռանդով մօտենալ այն աշխատաւորական խաւերին, որոնք
գեռ հեռու են մնում մեր շարժումից, որպէսզի 204 - ը դառնայ
գաղութահայ բոլոր աշխատաւորական եւ դեմոկրատական տար-
բերի իրապէս մասսայական կազմակերպութիւնը:

204 - ը՝ իր պայքարի ընթացքում՝ հասկանալի է որ պէտք է
աշխատի ձեռք բերել գործակցութիւնը այն բոլոր հասարակական
կազմակերպութիւնների եւ անհատների, որոնք բարեկամաբար են
արմատաւրւած դէպի խորհրդային հայրենիքը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ընկերներ, համառօտ հաշուութիւնը կատարելով մեր խոր-
հրդային իշխանութեան եւ 204 - ի տարած մեծ յաղթանակների,
անցեալ տարւայ ընթացքում, մենք ուզում ենք կանգ առնել մի
քանի խնդիրներ Վրայ:

Պէտք է ուրախութեամբ ասենք, որ առհասարակ լաւ են աշխա-
տում արտասահմանի մեր 204 - երը, բացի Յունաստանից, որ
չափազանց դանդաղ է շարժւում: Գոհ ենք Յրանախայի, Բուրդա-
րիայի, Հիւսիս. եւ Հարաւ Ամերիկաների 204 - երից: Վերջերս
վատ չի աշխատում եւ Ռումանիան, որ, վստահ ենք, շուտով կը
հաղորդէ աւելի թափ իր գործունէութեան:

Մեր խորհրդային հայրենիքի վերելքի թարգման՝ ՀՕԿ - երի տարած աշխատանքների արդյունքն են, մի կողմից՝ մեր կազմակերպութեան մասսայացումը մեծ չափերով, իսկ, մյուս կողմից՝ մեր հակառակորդների թուլացումն ու քայքայումը:

Իայց վտանգաւոր կը լինէր քնել շահած դափնիները վրայ: Պէտք է աւելի ընդարձակել եւ խորացնել մեր նաճումները՝ ներգրաւելու համար դաղութահայ բոլոր աշխատաւորական զանգւածները:

Ուստի եւ պէտք է ղիտակցինք մեր թերիներն ու բացերը եւ միջոցներ ձեռք առնենք, կարճ ժամանակի ընթացքում, վերացնել դրանց:

Ուրեմն, ընկերներ', ձեր առանձին ուշադրութիւնն ենք հրաւիրում կանանց եւ սպասանի — երիտասարդների վրայ, որոնց տուրք համարեա աննշան է մեր կազմակերպութեան մէջ: Իսկ այդ երկու տարրերի ներգրաւումը կը հանդիսանայ վճռական դործոն մեր շարժման մեծագոյն չափերով մասսայականացման համար: Միանգամայն աւելորդ ենք համարում ընդգծելու այն դերը, որ կատարում են ինտելիգենտ (մտաւորական) առողջ ուժերը հասարակական կեանքում, Նրանց տուրք նոյնպէս աննշան է մեր կազմակերպութեան մէջ:

Հետեւաբար, բացարձակապէս անհրաժեշտ է ուժեղացնել՝

1) Կին - Բաժինները.

2) Երիտ - ՀՕԿերը.

3) Մտաւորական ուժերի հաւաքը:

Եւ, վերջապէս, ընկերներ', հրաւիրում ենք ձեզ՝ ծաւալելով սոցմըցումն ու հարւածայնութիւնը՝ պատուով սրակել այն երեք կարեւորագոյն խնդիրները, որոնց իրագործման ձեռնարկեցինք անցեալ տարւայ ընթացքում, այն է՝ բնակարանային եւ (Արմենիա) հիւրանոցի փոփոխի ստեղծումն ու «ՀՕԿ» ամսագրի դարգացումն ու ծաւալումը՝ այն չափերով, որ նա դառնայ դաղութահայ աշխատաւորութեան իսկական ուղեցոյցը:

Յտոա՛ջ, ուրեմն, ընկերներ', դէպի մեր նպատակների իրագործումը, դէպի նոր եւ աւելի մեծ յաղթանակներ:

Կեցցէ դաղութահայ աշխատաւորութիւնը:

Կեցցէ ՀՕԿը:

Կեցցէ Խորհրդային Հայաստանը:

ՀՕԿի Գլխաւոր վարչութեան Նախագահ՝ Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՀՕԿի Գլխ. վարչութեան Փոխ-Նախագահ եւ Գործերի վարիչ՝
Տ. ԶԱԻԷՆ

Երեւան



ՔԱՂԻԱԾՆԵՐ ՀՕԿ-Ի ԾՐԱԳՐԷՆ

1. ՀՕԿ-ը կը սատարէ Խորհ. Հայաստանի շինարարութեան եւ մշակութային վերելքին:
2. ՀՕԿ-ը կը ծանօթացնէ Խ. Հայաստանի բոլոր նախնումները գաղութահայութեան լայն զանգւածներուն:
3. ՀՕԿ-ը կ'ամրացնէ Խորհ. Հայաստանի եւ գաղութահայ աշխատաւորութեան կապը:
4. Ամերիկայի ՀՕԿ-ը իր աջակցութիւնը կը բերէ Խ. Հայաստանի շինարարութեան եւ մշակութին ՀՕԿ-ի Գլխաւոր վարչութեան միջոցով:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀՕԿ-ը անկուսակցական կազմակերպութիւն է:

ՀՕԿ-ին կրնան անդամակցել ամեն անոնք որ կողմնակից են Խ. Հայաստանին եւ կ'ընդունին կանոնագրի բոլոր տրամադրութիւնները:

Անդամատուրքն է այրերու համար՝ տարեկան \$2.00, կիներու համար \$1.00:

Անուն

Հասցէ

Քաղաք

ԱՆԴԱՄԱԿՑԻՐ ՀՕԿ-ԻՆ

« Ազգային գրադարան



NL0215824

104

42. 904



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳԸ ՄԵՐ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՋ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՕԿ-Ի
31-33 East 27th Street
New York, N. Y., U. S. A.